#ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

ՏԵՂԵԿԱԳԻՐ 8, ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021



ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԱՐԺԱՆՔՆԵՐ

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆ ԻՆՖՈԳՐԱՖԻԿԱՆԵՐՈՎ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՎԻԴԵՈԲԼՈԳ

ՆԱԽՈՐԴ ՏԵՂԵԿԱԳՐԵՐԸ ՏԵՍ ԱՅՍՏԵՂ

Փաստերի ստուգման լաբորատորիաների աշխատանքները

«Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակներում 2020 թվականի հուլիսից Ինֆորմացիայի ազատության կենտրոնը Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ-ի հետ գործարկեց փաստերի ստուգման լաբորատորիաները Հայաստանի 5 կրթական հաստատությունում.

- Երևանի Պետական համալսարանի Ժուռնալիստիկայի ֆակուլտետ
- Բրյուսովի անվան Լեզվագիտական համալսարանի Լրագրության բաժին
- Գավառի պետական համալսարան
- Մխիթար Սեբաստացի կրթահամալիր
- Արեգնազան կրթահամալիր:

The U.S. Embassy in Armenia

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ-Հայաստան

Տեղեկագիրը պատրաստվել և հրապարակվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի համատեղ իրականացվող «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակներիի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ՓԱՍՏԵՐԸ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՆ ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ

Երևանի պետական համալսարանի Ժուռնալիստիկայի ֆակուլտետն առաջինն արձագանքեց ծրագրի նախաձեռնությանը և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ կնքեց Հուշագիր՝ ֆակուլտետում Փաստերի ստուգման լաբորատորիա հիմնելու վերաբերյալ:

Ֆակուլտետի ուսանողները Փաստերի ստուգման լաբորատորիայում ծանոթանում են կարևորագույն այն գործիքներին, որոնք ապագայում կիրառելու են որպես ոլորտի մասնագետներ: Ուսանողները կատարում են ուսումնասիրություններ, գրում նյութեր, որոնք նաև հրապարակվում են տարբեր առցանց պարբերականներում:

Երևանի պետական համալսարանի Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողները միացել են Փաստերի ստուգման Լաբի աշխատանքներին: Ապագա լրագրողները ծանոթանում են ապատեղեկատվությունը հայտնաբերելու և տեղեկությունները ճշտելու ժամանակակից գործիքներին, փորձարկում դրանք համատեղ վարժանքների ընթացքում: Դասերի ընթացքում ուսանողներն օգտվում են տարբեր գործիքներից, ուսումնասիրում լուսանկարներ, տեսանյութեր, քարտեզներ, փորձում գտնել դրանց սկզբնաղբյուրները: Ինչպես նաև՝ դասընթացավարի օգնությամբ ուսանողները տեղեկություն ստանալու հարցումներ են ուղարկում պատկան մարմիններին, ստանում պատասխաններ, վերլուծում դրանք:

Խորացված որոնման և ըստ տեղանքի սոցցանցերի գրառումների որոնման համար այս ընթացքում ուսումնասիրել են նոր գործիքների կիրառություն, փորձել առավել մանրամասն ուսումնասիրել սոցիալական ցանցերը՝ ներքին որոնողական հնարավորությունների միջոցով, ինչպես նաև զննել օգտատիրոջ գործողությունները սոցցանցում: Նրանք փորձում են փնտրել ջնջվա ծտեղեկատվությունը, գտնել լուսանկարների և տեսանյութերի սկզբնաղբյուրները, պարզել դրանց իսկությունը, տեղանքը:

ԵՊՀ Լրագրության ֆակուլտետի ուսանողների վարժանքները

https://bit.ly/3nAhsM8
https://bit.ly/332tgwU
https://journalist.am/archives/24816
https://journalist.am/archives/25482
https://journalist.am/archives/25349
https://journalist.am/archives/25393
https://journalist.am/archives/25780
https://journalist.am/archives/25804

ԵՊՀ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԸ

Ստեփանակերտում արված լուսանկարները ներկայացվել են որպես ադրբեջանական

01/11/2020 73

Չինական CGTN միջազգային մեդիա կազմակերպությունը ինսթագրամյան էջում հրապարակել է Ստեփանակերտում արված լուսանկարները՝ որպես Ադրբեջանական Գյանջա քաղաքում արված նկարներ: Հուղարկավորության ընթացքում արված լուսանկարներին կից գրության մեջ ասվում է, որ Հայաստանի կողմից Ադրբեջանի Գյանջա քաղաքի հրթիռակոծման հետևանքով իրենց հարազատներին ու ընկերներին կորցրած բնակիչները վշտով լի աչքերով աղոթում են: Գրության մեջ նշվում է նաեւ, որ Ստեփանակերտ քաղաքից հրթիռակոծումից ժամեր անց՝ ավելի սրացնելով էթնիկ հայերի և ադրբեջանցիների՝ արդեն 3 շաբաթ ձգվող կոնֆլիկտը տարածաշրջանի համար, Ադրբեջանի 2-րդ ամենամեծ քաղաքում՝ Գյանջայում, շաբաթ օրվա դրությամբ 12 խաղաղ բնակիչ է սպանվել, 40-ը՝ վիրավորվել:

Ընդ որում՝ ՀՀ ՊՆ-ն բազմիցս հայտարարել է, որ ինքը Գյանջայի քաղաքացիական ենթակառուցվածքներին հարվածներ չի հասցնում: Հայկական կողմի հերքման մասին լուսանկարներին կից գրության մեջ նշել է նաեւ CGTN-ն՝ իր ինսթագրամյան էջում:

Այս լուսանկարները ներկայացվել են որպես ադրբեջանական՝ չնայած այն հանգամանքին, որ լուսանկարներից մեկում ակնհայտորեն երեւում է Արցախի Հանրապետության դրոշը, ներկա գտնվողներից մեկն էլ ԱՀ ԱԻՊԾ աշխատակցի համազգեստով է: Մեկ այլ նկարում էլ երեւում է ծաղկեպսակ, որի վրա գրված են հայերեն բառեր: Լուսանկարների հեղինակը Ֆրանս Պրեսս գործակալության (AFP) լուսանկարիչ Արիս Մեսսինիսը: Վերջինս այս լուսանկարները հրապարակել էր իր ֆեյսբուքյան էջում, որից հետո դրանք լայն տարածում գտան նաեւ հայկական մեդիա տիրույթում: Լուսանկարիչը լուսանկարներին կից գրել էր.

«Նրանք դա անվանում են կորուստ, բայց ցավը զգալ չեն կարող:

Ճառայանից ընկերների հուղարկավորությունները Ստեփանակերտում 2020 թ. Հոկտեմբերի 17-ին, քանի որ Հայաստան-Ադրբեջան հակամարտության ընթացքում կռիվը շարունակվում է»:

Մանիպուլյացիա՝ ԱՎԾ տվյալները ճիշտ ներկայացնելով

05/11/2020 119

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն պարբերաբար հրապարակում է վիճակագրական տվյալներ ՀՀ տարբեր ոլորտների, ճյուղերի վերաբերյալ: Դրանք ակտիվորեն տարածվում են մամուլում եւ որոնց հավաստիության վրա կասկածներ չեն լինում, քանի որ բոլոր տվյալները մշակվում եւ հրապարակվում են նաեւ վիճակագրական կոմիտեի կողմից: Սակայն, արդյո՞ք ինչպես հրապարակվել է, նույնությամբ էլ տարածվում է մամուլում, թե՞ պարբերականները հայեցողական մոտեցում են ցուցաբերում վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալները վերահրապարակելիս:

Որպեսզի հասկանանք, թե ինչպես են մանիպուլացնում Ազգային վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալներով, դիտարկենք 1 հոդված:

Դեռեւս սեպտեմբերի 2-ին «Ժողովուրդ» օրաթերթը հրապարակել էր հոդված «Մեկ ամսվա ընթացքում Հայաստանում բենզինի գինը բարձրացել է 3.9 տոկոսով» վերտառությամբ, որտեղ ներկայացվում էր միայն վերջին մեկ ամսում տեղի ունեցած բենզինի եւ դիզելային վառելիքի գնածը: Հոդվածում մասնավորապես գրել են. «Այս տարվա հուլիսին, հունիսի համեմատ, Հայաստանում **բենզինի գինը բարձրացել է 3.9%-ով, իսկ դիզելային վառելիքինը՝ 3.6%-ով**: Այսօր հայաստանյան բենզալցակայաններում ռեգուլյար տեսակի բենզինի մեկ լիտրն արժե 340 դրամ, իսկ պրեմիումը՝ 360 դրամ, մինչդեռ հուլիսին ռեգուլյար տեսակի բենզինը վաճառվում էր լիտրը 300 դրամով»:

Վերոնշյալ ձեւակերպումը լիովին համապատասխանում է իրականությանը, սակայն գնածի վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ներկայացնել թվերն ամբողջությամբ:

Այսպիսով՝ 2020 թվականի հուլիսին նախորդ ամսվա համեմատ բենզինի գինը բարձրացել է 3,9%-ով, սակայն դրանից առաջ 5 ամիս շարունակ նշված ոլորտում եղել է գնանկում: Օրինակ փետրվարին հունվարի նկատմամբ եղել է 0,3% գնանկում, մարտին՝ 3,7%, ապրիլին՝ 17,1%, մայիսին՝ 9,8%, իսկ հունիսին 0,2%: Նախորդ

Փաստերի ստուգման օգտակար հղումներ

Փաստերի ստուգման ամենաառաջին գործողություններն սկսվում են որոնողական համակարգերում, որոնք թույլ են տալիս, օրինակ, գտնել լուսանկարների սկզբնաղբյուրը կամ տվյալ էլեկտրոնային հասցեի հետքերը եւ այլն:

Որոնողական համակարգերից հիմնական օգտագործվող գործիքը **«Google»**-ն է շատ պարզ պատճառով. այս համակարգն ունի տվյալների ամենամեծ շտեմարանը համացանցի մասին: Ռուսալեզու, իսկ ավելի ճիշտ, կյուրեղատառ էջերի որոնման համար կարելի է կիրառել «**Yandex**» համակարգը, քանի որ շատ հարցերում այն ավելի լավ է հասկանում ռուսերենը:
Մեկ ուրիշ այլընտրանք է նաեւ **Bing.com**-ը: Եթե անսպասելի պետք լինի չինական հատվածի որոնում, ապա կարելի է օգտվել նաեւ Չինաստանի «Գուգլից»՝ **Baidu.com**:

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆ ԻՆՖՈԳՐԱՖԻԿԱՆԵՐՈՎ

ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ՈՐՈՆԵԼ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

Ինչպես
ճիշտ որոնել
համացանցում

Google

Խորացված որոնում

Կարելի է որոնել ըստ բանալի բառերի՝ ներառելով կամ բաղառելով կոնկրետ բառերը կամ որոնել ցանկացած ժամանակային միջակայքում:

"բանալի բառ"

որոնման դեպքում Գուգլ-ը կգտնի համացանցում առկա ամեն ինչ, որը ներառում է «բանալի բառ» արտահայտությունը

"բանալի բառ" ext:pdf (doc, xls...)

որոնման դեպքում Գուգլ-ը կգտնի համացանցում առկա ամեն ինչ, որը ներառում է «բանալի բառ» արտահայտությունը՝ նախընտրելի ֆորմատով:

Մանրամասն՝
https://www.google.com/advanced_search

Ինչպես կարդալ
Գրաֆիկները

Գրաֆիկական կամ վիզուալ պատկերները ավելի ընկալելի են դարձնում բարդ տեքստերը և մեծ տվյալները

և մանիպուլյացիայի դիմելու ավելի լայն հնարավորություններ տալիս

100%

Pie chart-երի առանձին կտորներում ներկայացված տվյալների գումարը պետք է կազմի 100.

Ճիշտ համեմատություն

Ճիշտ չէ համեմատել տարեկան և մեկ կամ մի քանի ամսվա տվյալները, կամ լոլիկի և ոսկու արտահանման ծավալները:

Գույները կարող են մոլորեցնել

Որոշ գույներ մարդը ենթագիտակցորեն կապում է կոնկրետ տրամադրությունների հետ. ծուղակը չընկնելու համար ուշադիր եղիր պատկերներին:

Որոնողական մեքենաներն ունենում են լրացուցիչ գործիքներ, որոնցից սովորաբար մարդիկ ոչ միայն չեն օգտվում, այլև նույնիսկ տեղյակ չեն դրանց մասին: Իսկ հետաքննական լրագրության, փաստերի ստուգման համար հենց այդ գործիքներն են կարեւոր:

«Գուգլ»-ն ունի լրացուցիչ որոնողական օպերատորներ, որոնք թույլ են տալիս ցանցի զննումը նեղացնել մինչև մեկ կայքի սահմաններում, հեռացնել «բանալի» խոսքերը, գտնել ուզած ձևաչափի ֆայլեր եւ այլն:

Օգտակար օպերատորները.

- site:example.com - Որոնում որոշակի կայքում
- filetype:pdf - հստակ տեսակի ֆայլերի որոնում, օրինակ՝ pdf, doc, ppt, txt
  -բառ - բառի վերացում որոնումից
  -հստակ արտահայտության որոնում
- cache:example.com - «Գուգլ»-ումէջի պահպանված տարբերակի դիտարկում

Բացի դրանից, համակարգն ունի լրացուցիչ գործիքակազմ, որը հասանելի է «Tools» կոճակի միջոցով: Այստեղ կարելի է հրահանգել ցուցադրել նյութեր միայն տրված ժամանակահատվածից, ընտրել կոնկրետ չափսի լուսանկարներ, հստակ տեւողության տեսանյութեր եւ այլն:

ԻՆՉՊԵՍ ՈՒՂԱՐԿԵԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ պետական և հանրային մարմինները պարտավոր են պատասխանել տեղեկատվություն ստանալու հարցմանը 5-օրյա ժամկետում,

Հավելյալ աշխատանքի անհրաժեշտության դեպքում գերատեսչությունը կարող է խնդրել 30 օր ժամանակ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

E-request.am

Կայքի միջոցով հնարավոր է ուղարկել հարցում, դիմում և նամակ, ինչպես նաև հետևել վերջիններիս ընթացքին՝ հատուկ կոդի միջոցով:

Էլ. փոստի միջոցով

Գերատեսչությունների տեղեկատվության ազատության պատասխանատու անձի կոնտակտային տվյալները և էլեկտրոնային փոստը հրապարակված է պաշտոնական կայքերում:

Փոստով

Ավանդական՝ փոստային առաքման տարբերակը ժամանակատար, սակայն ընդունելի եղանակ է:

Տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է հիմնավորել մերժումը՝

հղում կատարելով տեղեկատվության տրամադրումը մերժելը թույլատրող օրենքի կետին:

20 Տարի 2001 - 2021 ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ Միասին Տեղեկատվության Ազատության Համար

foi@foi.am

+374 91 407836

+374 91 700 974

#ԱՆՎՃԱՐ_ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

տեղեկատվության ազատության ոլորտում

ԴԻՄԵՔ ՄԵԶ, եթե

- չգիտեք՝ ինչպես դիմել տեղեկություն ստանալու համար
- ստացել եք թերի կամ ոչ լիարժեք պատասխան
- խախտվել են տեղեկություն ստանալու ժամկետները
- պետական մարմինները մերժել են տրամադրել պահանջվող տեղեկությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հեռ.՝ (+374 10) 560 360

Էլ. փոստ՝ foi@foi.am

www.foi.am

#ՎԻԴԵՈԲԼՈԳ

#ՖԵՅՔԱՔԱՂ 8
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ-ն «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակում մեկնարկել են Ֆեյքաքաղ վիդեոբլոգների շարքը:

Նախաձեռնության նպատակն է զարգացնել լրատվամիջոցների մեդիագրագիտությունը և երիտասարդության փաստերի ստուգման հմտությունները:

Ֆեյքաքաղ #8. Բացահայտում ենք սունկ կայքերը

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Ղազար Փարպեցու 9բ, 27 ա
Հեռ.՝ +374 95 938363
Էլ. փոստ՝ info@mdi.am
www.mdi.am

https://www.facebook.com/FOICenterArmenia/